

Դպրոցի տնօրեն՝

Է.Ն.Խիկողոսյան



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Կոտայքի մարզ, Ձրվեժ համայնք, Ձուլք գյուղ

մարզ, համայնք, գյուղ

Ձուլքի Գ. Շահինյանի անվ. միջն. դպրոց

ուսումնական հաստատության անվանումը

12-րդ դասարան

դասարանը

Լուսինե Հովհաննեսի Դպրարան

դասարանի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը

<<2022-2023 >> ուսումնական տարի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (կրճատումով)

Հոդված 5. Հանրակրթության նպատակները և պետական քաղաքականության սկզբունքները

1. Հանրակրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի.
 - 1) մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը.
 - 2) մարդկային արժանապատվության պահպանմանը.
 - 3) իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը հա-մապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը.
 - 4) ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը և հիմնու-րույնկյան քինախապատրաստմանը.
 - 5) մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը.
 - 6) ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը.
 - 7) որպես ապագա քաղաքացու ձևավորմանը.
2. Հանրակրթության բնագավառում մեթոդները երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը.
 - 1) հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համա-մարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի և հասարակության համակարգի մասնաբաժնեությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ փարզանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվու-թյունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհա-յացքի ձևավորումը.
 - 2) հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձ-նահատկություններին ու պատրաստվածության աստիճանին.
 - 3) հանրակրթության բնագավառում մեթոդականության կառավարման սկզբունքների ապահովումը.
 - 4) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտա-ծողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տե-ղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնությունը.
 - 5) հանրակրթության որակի շարունակական բարելավումը, միջազգային նշանակություն ունեցող համապատասխանությունը, ինչպես նաև միջազգային կրթական համակարգին համարժեցումը.
 - 6) ուսումնական հաստատությունների ինքնավարության և պետական վերահսկողության հավասարակշռումը.
 - 7) անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ ուսումնական հաս-տատությունների և դրանցում սովորողների ու աշխատողների իրավա-

հավասարությունը.

8) հանրակրթական և այլ կրթական ծրագրերի փոխհամաձայնեց-վածությունը: (5-րդ հոդվածը խմբ. 01.12.2014 թ. ՀՕ-200-Ն)

Հոդված 20. Սովորողի իրավունքներն ու պարտականությունները

1. Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:
2. Սովորողն իրավունք ունի՝
 - 1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշիչ համապատասխան կրթություն.
 - 2) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությու-նում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.
 - 3) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնականության կամ բազայից.
 - 3.1) ստանալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը բա-վարարելու նույնը վաճառելու ծառայություն.
 - 4) մասնակցելու ներդրողական և արտադրողական միջոցառում-ների.
 - 5) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատող-ների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործու-թյունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգու-թյուն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը.
 - 6) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.
 - 7) ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղե-կատվություն, բացառությամբ օրենքով սահմանված ռեզերվների.
 - 8) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.
 - 9) օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնա-դրությամբ սահմանված այլ իրավունքներից:
3. Սովորողը պարտավոր է՝
 - 1) կատարել ուսումնական հաստատության կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.
 - 2) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համա-պատասխան գիտելիքներ, ձեռքբերել և տիրապետել համապատաս-խան հմտություններին և կարողություններին, բավարարել սահմանված արժեքային համակարգի ներկայացվող պահանջները.
 - 3) հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին.
 - 4) կատարել օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրու-թյամբ սահմանված այլ պարտականություններ: (20-րդ հոդվածը լրաց. 01.12.2014 թ. ՀՕ-200-Ն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՐԵՒԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (կրճատումով)

Հոդված 10. Երեխայի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք:

Երեխայի հայացքները, համոզմունքները և կարծիքը ենթակա են նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրության: Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, որոնելու, ստանալու և հաղորդելու գաղափարներ ու տեղեկատվություն հաղորդակցության ցանկացած միջոցով: Երեխայի տեղեկատվություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով:

Դավանանքի ազատության և համոզմունքների արտահայտման իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, երեխայի առողջության,

բարոյական և կարագրիկ ամայլան- ծանցիման կանխարգելիչ և պաշտպանության նպատակով:

Արգելվում է առանց ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համա-ձայնության մինչև 16 տարեկան երեխայի մասնակցությունը կրոնական կազմակերպություններին: (15.11.2003 թ. խմբագրու.թ.)

Հոդված 20. Երեխայի հանգստի իրավունքը (կրճատումով)

Յուրաքանչյուր երեխա ունի հանգստի և ժամանցի, իր տարիքին համա-պատասխան խաղերին և միջոցառումներին ազատորեն մասնակցելու իրավունք:

Հոդված 21. Միավորումներին անդամակցելու երեխայի իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի քաղաքացիների միավորումներին, այդ թվում՝ հասարակական, մանկապատանեկան կազմակերպություններին անդամակցելու, խաղաղ հավաքներին մասնակցելու իրավունք:

Հոդված 22. Երեխայի պատվի և արժանապատվության պաշտպանության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի պատվի և արժանապատվության պաշտպանության իրավունք:

Ոչ մի երեխա անձնական, ընտանեկան կյանքի, գրագրության և հեռա-խոսային խոսակցության գաղտնիության կամ բնակարանի անձեռնմխելիության խեղճությամբ չպետք է խեղճվի:

Խելիության իրավունքներն իրացնելիս չի կարող ենթարկվել կամ այլ կերպ,

ապօրինի միջամտության կամ իր պատվի և արժանապատվության նկատմամբ տնտեսաբար ծագությունների:

Ուսումնադաստիարակչական հաստատություններում երեխայի ուսուցումը և դաստիարակությունն իրականացնող անձանց ու երեխայի

փոխհարաբերություններն իրականացվում են փոխադարձ հարգանքի հիման վրա:

Երեխայի պատվի ու արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ, ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներ-կայացուցիչները, երեխայի դաստիարակությունը և ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրության մասնակցությամբ կարգով:

Հոդված 24. Ծնողական խնամքից զրկված երեխայի իրավունքների պաշտպանությունը (կրճատումով)

Առանց ծնողական խնամքի մնացած երեխան ունի պետության և նրա համապատասխան մարմինների կողմից պաշտպանության, խնամքի, դաստիարակության և օգնության իրավունք: Պետությունն ու նրա համա-պատասխան մարմիններն ապահովում են նման երեխաների խնամքը և դաստիարակությունը՝ որդեգրման, խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու և խնամատար ընտանիքում տեղավորելու, իսկ դրան հնարի նություն դեպքում՝

համապատասխան մանկատներում տեղավորելու միջոցով: (16. 03. 2004 թ. խմբագրությամբ)

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության (կրճատումներով)

76. Դասարանի ղեկավարը (տարրական դպրոցում՝ դասվար)՝

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համա-գործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

2) նպաստում է հանրակրթական դպրոցի և ընտանիքի մանկավարժական միասնական պահանջների ապա-հովմանը սովորողների նկատմամբ.

3) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

4) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, հանրակրթական դպրոցի տնօրինու-թյանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.

5) կազմակերպում է սովորողների առողջության ամ-րապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուր-սիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.

6) հանրակրթական դպրոցի մանկավարժական խոր-հրդի քննարկմանն է ներկայացնում սովորողի կարգա-պահական տույժի ներկայացնելու հարցը.

7) արգելում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել, ինչ-պես նաև խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:

127. Հանրակրթական դպրոցում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ և կանոնադրությամբ:

128. Սովորողն իրավունքները և պարտականություն-ները սահմանվում են օրենքով:

129. Հանրակրթական դպրոցն ապահովում է կրթական ծրագրի կատարման անվտանգ և ապահով պայման-ներ, բնականոն աշխատանքային ռեժիմ, բժշկական օգնություն և սպասարկում, ինչպես նաև սովորողների

Ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ, ձևավորում է անձնական հիգիենայի և առողջ ապրելակերպի հմտություններ:

130. Յուրաքանչյուր սովորող տարին առնվազն մեկ անգամ անցնում է բժշկական (*պրոֆիլակտիկ*) հետազոտո-ւթյուն, որն իրականացվում է հանրակրթական դպրոցի բժշկական սպասարկման ծառայության կողմից, իսկ դրան հնարինություն դեպքում՝ տարածքային սպասարկման առողջապահական կազմակերպության կողմից՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:

131. Հանրակրթական դպրոցում կարգապահությունն ապահովվում է օրենքով, կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով:

132. Հանրակրթական դպրոցի ներքին կարգապահական կանոնները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում օրենքով և կանոնադրությամբ սահմանված կարգով միջին և ավագ դպրոցների սովորողներին կատմամբ կիրառվում են կարգապահական տույժերը:

133. Սովորողների համար հիմնադրի, նախարարության, տարածքային կառավարման և տեղական ինքնա-կառավարման մարմինների, հանրակրթական դպրոցի, ինչպես նաև սոցիալական գործընկերների, կազմակերպությունների, անհատների կողմից կարող են սահմանվել բարոյական և նյութական խրախուսման ձևեր՝ շնորհակալագիր, գովասանագիր, դրամական խրախուսում կամ կանոնադրությամբ սահմանված այլ ձևեր:

136. Սովորողի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը ոչ պատշաճ կատարելն կամ չկատարելը, եթե դրա հետև-վանքով երեխայի առողջությանն անգուշությամբ պատճառվել է միջին ծանրության վնաս այն անձի կողմից, ում վրա դրված են այդ պարտականությունները, ըստ ծառայության, կրում են պատասխանատվություն օրենքով սահմանված ի՞ճ-նի:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Հասցե	Հեռախոսի համար	Ծնողի (օրինական ներկայացուցչի) աշխատանքի վայրը կամ զբաղմունքը	Ընտանիքի սոցիալական վիճակը	Ծանոթություն
1	գ. Զովք, փ. 2, տ. 14	077902856	մենատնտես	բավարար	
2	գ. Զովք, փ. 4, փ. 1, տ. 1	096117196	մենատնտես	բավարար	
3	գ. Զովք, փ. 3, փ. 1, շ. 1, բն. 8	077847037	մենատնտես	բավարար	
4	գ. Զովք, փ. 3, փ. 1, շ. 2, բն. 1	094110978	մենատնտես	բավարար	
5	գ. Զովք, փ. 6, տ. 4	077966840	մենատնտես	բավարար	
6	գ. Զովք, փ. 3, նրբ. 1, տ. 2	077243883	մենատնտես	բավարար	

ԿՐԹԱԿԱՆ - ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ** (դասարանի ընդհանուր բնութագիրը) 12-րդ դասարանը բաղկացած է վեց աշակերտից: Աշակերտներն ունեն բավարար ընդունակություններ: Չկան գերազանց սովորող աշակերտներ: Դասարանում բոլորը համախմբված են: Աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է բավարար: Ունենք երկու ծնողազուրկ աշակերտ: Երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն: Չկան դժվար դաստիարակվող աշակերտներ:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուստարվա ընթացքում

Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին, որպեսզի այդ թերությունները շտկվեն: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենա, համագործակցություն, փոխօգնություն):

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 **Հոգևոր դաստիարակություն** Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 **Գեղագիտական դաստիարակություն** Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել, թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 **Ռազմահայրենասիրական դաստիարակություն** Հայրենասիրության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ: Նշել մի շարք ֆիդայիների անուններ և թվարկել նրանց բնավորության գծերը, պատմել նրանց հայրենասիրության և ռազմական փառապանծ ու դժվարին ուղու մասին:

Հայրենիքի պաշտպանությունն ամբողջ ժողովրդի պարտականությունն է, բայց առանձնահատուկ պարտականություն ու դեր ունեն երկրի զինված ուժերը: Կարճ ժամանակամիջոցում տիրապետել ժամանակակից զենքին և դառնալ հայրենիքի պաշտպան՝ այնքան էլ դյուրին գործ չէ: Հետևաբար՝ յուրաքանչյուր պատանի պետք է նախօրոք իրեն նախապատրաստի զինվորական ծառայությանը: Եվ դպրոցի գլխավոր խնդիրներից մեկն էլ հենց ՀՀ պաշտպանական գործին եռանդուն օժանդակելն է: Գրագետ, հոգեպես ու ֆիզիկապես կոփված, բանակի մասին տեղեկացված ու պատրաստված սերունդ դաստիարակելու գործընթացը մեզանում օրեցօր ավելի է կարևորվում: Մեր առաջնակարգ խնդիրն է աշակերտների մեջ սերմանել այն համոզումը, որ մեր երկիրն ինքներս պետք է պաշտպանենք ոտնձգությունից և ապահովենք հայրենիքի անվտանգությունը: Հայրենիքը սուրբ է ու նվիրական, իսկ հայ զինվորը պատմության ամբողջ ընթացքում համարվել է ազգի ծաղիկը: Այսպիսով, յուրաքանչյուր ծնողի և դպրոցի պատվավոր խնդիրն է բարձր դասարանի երեխաներին նախապատրաստել զինվորական ծառայությանը, ինչը պահանջում է հայրենասիրական պարտքի կատարում, արիություն, ուժեղ կամք, խիզախություն: Մերմանել հարգալից վերաբերմունք մեր ազգային բանակի նկատմամբ, բանակ, որն աչալուրջ պահպանում է մեր ընտանիքների և մեր պետության անվտանգությունը:

3.4 **Ֆիզիկական դաստիարակություն** Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն: Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Նրանց տալ այնպիսի կարողություններ ու գիտելիքներ, որոնց շնորհիվ կարողանան գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի շարք խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում:

4. Դպրոց-ընտանիք կապը Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ պահեն դպրոց - ընտանիք կապը:

Սովորողների կրթության զարգացման գործում զգալի ներդրում ունեն ծնողները: Ամենօրյա աշխատանքի արդյունքում անհրաժեշտ է ձեռք բերել փոխադարձ վստահություն: Ծնողական խորհրդին ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում՝ նրան վերապահելով նաև հետևյալ լիազորությունները.

. ծնող-դպրոց կապի ամրապնդում,

. ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում:

Այսպիսով՝ սովորողը պետք է գիտակցի սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը: Նա պետք է ճանաչի իր հայրենիքը, լինի հայրենասեր, լիարժեք տիրապետի Հայաստանի Հանրապետության պետական լեզվին՝ հայերենին:

Շրջանավարտը պետք է՝

-**գիտակցի** հայ ժողովրդի և հայոց պետության դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ, **ունենա** ազգային մտածողություն և ինքնագիտակցություն, **լինի** ազգային ավանդույթների կրողը, պահպանողն ու փոխանցողը,

-**մտահոգվի** ազգային և պետական խնդիրների լուծմամբ,

-**ունենա** պետական չափորոշիչով սահմանված գիտելիքների համակարգ և ձեռք բերած գիտելիքները կյանքում ստեղծագործաբար կիրառելու ունակություն,

-**օժտված լինի** ինքնուրույն մտածելակերպով, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողությամբ,

-**իմանա** իր իրավունքներն ու պարտականությունները, **լինի** օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող և հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի:

ՌԻՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը	Կատարողներ
I	Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների ծրագրում	5 սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
II	<<Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես >> թեմայով զրույց: Ձևավորել բազմակարծություն և աշխարհայացք	12 սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
III	<<Եթե ես լինեի ...>> թեմայով քննարկում: Նպատակն է վեր հանել կարողությունները և հմտությունները	19 սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
IV	<<Կարողությունների հստակեցում >> թերթիկի միջոցով հստակեցնել, թե որ կարողություններն են ավելի զարգացած	26 սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
V	<<Ես էլ քեզ նման եմ>> թեմայով զրույցը. հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ	3 հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
VI	<<Բնական պաշարներ>> թեմայով քննարկումը կձևավորի գիտելիքներ արդյունաբերության տարբեր ոլորտների վերաբերյալ	10 հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
VII	<<Աշակերտների իրավունքները և պարտականությունները դարոցում>>. նպատակն է աշակերտների մոտ հստակեցնել իրենց իրավունքները և պարտականությունները	17 հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
VIII	<<Պետական խորհրդանիշներ>> թեմայով զրույց. նպատակն է աշակերտներին ներկայացնել ծագման և ձևավորման ուղին	31 հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
IX	<<Էկոլոգիական հիմնախնդիրներ>>. աշակերտներին հանձնարարել հավաքել տեղեկություններ Հայաստանի Հանրապետության առավել ուշագրավ էկոլոգիական խնդիրների մասին	7 նոյեմբեր	աշակերտ դասղեկ
X	<<Պոլիէթիլային տոպրակներն ու շրջակա միջավայրը>>. սառցացնել հին և նոր դասը, խնդրին տալ նոր լուծումներ	14 նոյեմբեր	աշակերտ դասղեկ
XI	<<Գնահատի՛ր ինքդ քեզ >>. նպատակն է ձևավորել արժեհամակարգ, ինչպես նաև կարողանալ կատարել ինքնավերլուծություն	21 նոյեմբեր	աշակերտ դասղեկ
XII	<<Աշխատակից ենք ընտրում>>. սովորողները կհասկանան՝ թեև տարբեր մասնագիտություններ պահանջում են տարբեր կարողություններ և որակներ, այնուամենայնիվ կան որակներ և կարողություններ, որ կարևոր են բոլոր մասնագիտություններում	28 նոյեմբեր	աշակերտ դասղեկ

XIII	<<Բնական աղետներ>>. ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները	5 դեկտեմբեր	աշակերտ դասուց
XIV	<<Կարող եմ օգտակար լինել>> թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել բարություն և դրական հատկանիշներ	12 դեկտեմբեր	աշակերտ դասուց
XV	<<Ազգ և պետություն>> թեմայով բաց քննարկում և վերլուծություն	19 դեկտեմբեր	աշակերտ դասուց
XVI	<<Փոքրիկ պատմություններ անհատի և հասարակության խնդիրների մասին>>. նպատակն է աշակերտներին տեղեկացնել, թե մարդկությունն ինչ զարգացման ուղի է անցել	9 հունվար	աշակերտ դասուց
XVII	<<Ազգային և միջազգային տոներ>>. նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները	16 հունվար	աշակերտ դասուց
XVIII	<<Եկեղեցին և ազգը>> քննարկման միջոցով աշակերտների մոտ կհիմնավորենք եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում	23 հունվար	աշակերտ դասուց
XIX	<<Լրատվամիջոցներ և կերպարներ>> թեմայի միջոցով լուսաբանել արդի ժամանակաշրջանում լրատվամիջոցների դերը	30 հունվար	աշակերտ դասուց
XX	<<Բարեկամներ և թշնամիներ>> քննարկման միջոցով կներկայացվի հայ-ադրբեջանական խնդրի ծագման պատճառները	6 փետրվար	աշակերտ դասուց
XXI	<<Ինչպես վարվել աղբի հետ>>. օգնել սովորողներին գիտակցելու աղբի և թափոնների վնասակար ազդեցությունը բնության և մարդու առողջության վրա	13 փետրվար	աշակերտ դասուց
XXII	<<Սպառողների իրավունքներ>>. ներկայացնել իրենց իրավունքները որպես սպառողներ	20 փետրվար	աշակերտ դասուց
XXIII	<<Քաղաքացիական ինքնություն>>. կիմանան՝ ինչ է քաղաքացիական ինքնությունը, կհասկանան, թե քաղաքացի լինելն ինչքանով է առնչվում իրենց հետ	27 փետրվար	աշակերտ դասուց
XXIV	<<Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք>>. աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողական վերաբերմունք հատուկ կարիքավոր մարդկանց նկատմամբ	6 մարտ	աշակերտ դասուց
XXV	<<Ապագայի ծառը>>. խթանում է վերլուծելու պատճառահետևանքային կապերը դիտարկելու, դասակարգելու հմտությունները	13 մարտ	աշակերտ դասուց

XXVI	Խաղ-վիկտորինա. աշակերտները կզարգացնեն և կստուգեն իրենց գիտելիքները, որոնց շնորհիվ խմբում կկարողանան հաջողություն ապահովել	20 մարտ	աշակերտ դասղեկ
XXVII	<<Նախապաշարումների ուստայն>>. ներկայացնել, թե ինչ է զգում նախապաշարմունքի և կարծրատիպերի զոհ դարձած մարդը, որոնք իրավիճակը հաղթահարելու ուղիներ	3 ապրիլ	աշակերտ դասղեկ
XXVIII	<<Պատասխանատու քաղաքացի>>. աշակերտներն այս թեման ուսումնասիրելուց հետո կիմանան, թե ինչպիսին պետք է լինի ցանկացած քաղաքացի: <<Հայոց Մեծ եղեռն>>. աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը՝ սերմանելով հայրենասիրություն	10 ապրիլ	աշակերտ դասղեկ
XXIX	<<Պետք է արդյոք բնությունը խնայել>>. խթանելով աշակերտների ստեղծագործական մտածողությունը՝ ձևավորել բնության և բնական պատարների հանդեպ խնայող վերաբերմունք	17 ապրիլ	աշակերտ դասղեկ
XXX	<<Ազգային զարթոնք>>. ներկայացնել հայերի մասնակցությունը մի շարք մարտական գործողություններին՝ նպատակ ունենալով աշակերտների մոտ ձևավորել ազգային գիտակցություն	8 մայիս	աշակերտ դասղեկ
XXXI	<<Ասացվածքի ամբիոն>>. աշակերտների մեջ զարգացնել բարոյական արժեքներ, հարգանք, մարդասիրություն	15 մայիս	աշակերտ դասղեկ
XXXII	<<Վերջին զանգ>> խորագրով գեղարվեստական ցերեկույթի կազմակերպում	22 մայիս	աշակերտ դասղեկ

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը	Դասղեկի անցկացրած միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	ծանոթություն
19.09.22թ.	Դասախոսություն Հայաստանի երրորդ հանրապետության մասին	
08.10.22թ.	Էքսկուրսիա դեպի Հաղարծին	
05.12.22թ.	Զրույց և քննարկում երկրաշարժի և այլ բնական աղետների վերաբերյալ	
30.02.23թ.	«Հայոց բանակ» թեմայով դասախոսություն և ֆիլմի դիտում	
06.03.23թ.	Զրույց գեղեցկության և բարոյականության վերաբերյալ	
03.04.23թ.	Մայրության տոնի մասին	
08.05.23թ.	«Հաղթանակ և պարտություն» թեմայով դասախոսություն	
	Էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր-մշակութային կենտրոն	
	Այցելություն տուն-թանգարան	

ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻՆ
(ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքների համառոտ ամփոփում և վերլուծություն)

ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Ուսումնական հաստատության դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիր» մատյանը նախատեսված է դասարանի ղեկավարի (այսուհետ՝ դասղեկ) կողմից դասարանի հետքագման կողմնակցական աշխատանքների և պատակամղված գործունեությունն, աշակերտների ուսումնառության զարգացման հիմնական ուղենիշները գիտամանկավարժական տե-սանկյունից համակարգելու, նախագծելու համար:

2. **Դասղեկը** աշխատանքային տարեկան ծրագիր կազմելիս նպատակահարմար է հաշվի առնել՝ դաստիարակչական խնդիրների ճշգրտությունն ու իրատեսությունը, աշակերտների գոծունեության կազմակերպման զուգակցվածությունը նուսումնադաստիարակչական աշխատանքների նախագծվելիք գործընթացներում, դասավանդող ուսուցիչների, մյուս մանկավարժների ու աշակերտների, մանկավարժների ու ծնողների միասնականությունը, ներդասարանական, ներդպրոցական և արտադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների ներդաշնակ կապը, աշակերտների տարիքային, անհատական առանձնահատկությունները, երեխաների (անհա-տական և ընդհանուր) դաստիարակվածության մակարդակի ու նրանց կյանքի պայմանների իրատեսությունը,

տարեկան պլան-ծրագրի փոխկապվածությունը և համաձայնեցվածությունը ուսումնական հաստատության մյուս ծրագրերի, պլանների հետ:

«Դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիր» մատյանը համարվում է համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքային տարեկան ծրագրի (պլանի) բաղիսային բաղադրիչը:

14, 15 և 16-րդ էջերի «ստացավ» և « հանձնեց» սյունակներում համառոտագրել ստացված և հանձնված դասագրքերի պիտանելիության գնահատականները՝ **գերազանց - Գ, լավ - Լ, բավա-րար - Բ, անմխիթար - Ա:**

Դասղեկի աշխատանքային ծրագիր-պլանը կազմվում է ուսումնական տարին սկսելուց առաջ և ըստ սահմանված կարգի **հաստատվում է տնօրենի կողմից:**

3. Դաստիարակչական աշխատանքների հիմնական խնդիրները պետք է լինեն անձի ձևավորման ամբողջականությունը և դաստիարակության յուրահատկությունները՝ տարիքը, սոցիալական շր-ջապատը և այլն:

4. Մատյանը հնարավորություն է տալիս դասղեկին, ըստ ուսումնական շաբաթների համակարգե-լու դաստիարակչական գործընթացը, որը թույլ կտատեսանելի դարձնելու ոչ միայն կատարվելիք աշխատանքները, այլև դրանց իրագործման ճշգրիտ ուղիները:

5. Պլան-ծրագրի բաժինները հաջորդականությունը և սերտ շարունակական կապը թույլ կտա տեսնելու աշակերտների մտավոր կարողությունների աստիճանական զարգացումը և վարքի դրական դրսևորումները, ծնող-դպրոց կապը:

6. Ուսումնական տարին ավարտելուց հետո դասղեկը անցած ծրագիր-պլանի վերլուծության հիման վրա կազմում է նորը: Պլան-ծրագիրը դասղեկը պահպանում է իր մոտ մինչև տվյալ դասարանի ուսումնառության աստիճանի՝ **I-IV, V-IX, X-XII** ավարտելը:

7. Ուսումնակա հաստատության **ներքին ու արտաքին** գնահատումների ժամանակ դասարանի ղեկավարի «Պլան-ծրագրի» գրքույկը կնպաստի դաստիարակչական աշխատանքների մասին առավել արդյունավետ եզրահանգումներ անելուն: